ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/97

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.12.2017թ. թիվ 03/26-3/24587-17 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4900 գրության հիման վրա, 28.12.2017թ. թիվ 03/26-3/24587-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Դառես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 29.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/24692-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Դառես» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 09.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ.-ին կնքվել է N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագիր, համաձայն որի «Դառես» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ի կարիքների համար պարտավոր էր մատուցել ամբարների /ռեզերվուարների/ վերանորոգման և պահպանման ծառայություններ: «Դառես» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել, իսկ հետագայում կնքել պայմանագիր մատուցվելիք ծառայությունների միավոր գներով և ծառայության առավելագույն գումար է սահմանվել 2 620 000 ՀՀ դրամ: Նաև համաձայն՝ N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի ծառայությունը պետք է մատուցվեր ք. Գավառում ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության հանձնարարականների հիման վրա: Ինչպես նշված է ՀՀ ՊՆ-ի կողմից ուղարկված նամակի, «Դառես» ՍՊԸ-ի աշխատակիցները իրականում եղել են ք. Գավառում մատուցվելիք ծառայությունների տեղանքին ծանոթանալու համար: «Դառես» ՍՊԸ-ի աշխատակիցները չէին կարող առանց ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության հանձնարարականների սկսել ծառայությունների մատուցումը, քանի որ ինչպես արդեն նշվել է պայմանագրով նախատեսված չի եղել մատուցվելիք ծառայությունների ծավալը և տեսակը: Հանձնարարականներ չլինելու պատճառով Ընկերությունը դիմել է ՀՀ ՊՆ ժամանակացույցի երկարացման համար և N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի ծառայությունների մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 30.11.2017թ.-ը ներառյալ: Այնուհետև Ընկերության էլեկտրոնային փոստին (dares7@mail.ru) 29.11.2017թ.-ն karen.mkhitaryan@mil.am էլեկտրոնային փոստից ստացվել է Հանձնարարական N 2 առ 27.12.2017թ. գրությունը առանց ստորագրության և կնիքի՝ Microsotf Word տարբերակով:

Քանի որ հանձնարարականը ուղարկվել է միայն 29.11.2017թ-ին, իսկ պայմանագրի ժամկետը ավարտվում էր 30.11.2017թ. Ընկերության աշխատակիցների համար անհնար էր մատուցել ծառայությունները 1 օրում:

«Դառես» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 11:30-ի և 16.01.2018թ. ժամը 10:45-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4900 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջը՝ 2017թ. դեկտեմբերի 19-ին միակողմանի լուծել է ամբարների /ռեզերվուարների/ վերանորոգման և պահպանման ծառայությունների /50 և 75 խմ տարողությամբ հորիզոնական տարողությունների նորոգման ծառայություն/ գնման N ԳՀԾՁԲ-7/17-1 պայմանագիրը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 21.12.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային թոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 11:30-ի և 16.01.2018թ. ժամը 10:45-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 16.01.2018թ. ժամը 10:45-ի նիստին և հայտնել է, որ ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետը հեռախոսով տեղեկացրել է «Դառես» ՍՊԸ-ի ներկայացուցչին հանձնարարականի և նախատեսվող աշխատանքների մասին, սակայն Ընկերության ներկայացուցիչները չեն ներկայացել հանձնարարականը ստանալու:

4. ՍՑ-ԱՄ-2017/97 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/97 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ. կնքվել է «ԳՀԾՁԲ-7/17-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Դառես» ՍՊԸ-ն) ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

4. Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի հանձնարարականների 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.11.2017թ.-ը:

5. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: ***Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

6. 31.10.2017թ. կնքվել է N «ԳՀԾՁԲ-7/17-1» ծածկագրով գնման պայմանագրի փոփոխություն N 1-ը, որի համաձայն՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշվել է N «ԳՀԾՁԲ-7/17-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը:

7. ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջը, 2017թ. դեկտեմբերի 19-ին միակողմանի լուծել է ամբարների /ռեզերվուարների/ վերանորոգման և պահպանման ծառայությունների /50 և 75 խմ տարողությամբ հորիզոնական տարողությունների նորոգման ծառայություն/ գնման N ԳՀԾՁԲ-7/17-1 պայմանագիրը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.12.2017թ. թիվ 03/26-3/24587-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4900 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ. կնքվել է «ԳՀՇՁԲ-7/17-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Դառես» ՍՊԸ-ն) ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի հանձնարարականների*** 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.11.2017թ.-ը:

31.10.2017թ. կնքվել է N «ԳՀԾՁԲ-7/17-1» ծածկագրով գնման պայմանագրի փոփոխություն N 1-ը, ըստ որի՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշվել է N «ԳՀԾՁԲ-7/17-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը:

Ընկերության ներկայացուցիչը ՍՑ-ԱՄ-2017/97 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ, ինչպես նաև 09.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի հանձնարարականների 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.11.2017թ.-ը, սակայն Պատվիրատուի կողմից հանձնարարականներ չլինելու պատճառով Ընկերությունը ժամանակացույցի երկարացման համար դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն և կողմերի համաձայնությամբ N ԳՀԾՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրի ծառայությունների մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 30.11.2017թ.-ը ներառյալ: Այնուհետև Ընկերության էլեկտրոնային փոստին (dares7@mail.ru) 29.11.2017թ.-ին karen.mkhitaryan@mil.am էլեկտրոնային փոստից ստացվել է Հանձնարարական N 2 առ 27.12.2017թ. գրությունը, բայց քանի որ հանձնարարականը ուղարկվել է միայն 29.11.2017թ-ին, իսկ պայմանագրի ժամկետը ավարտվում էր 30.11.2017թ.-ին, ապա Ընկերության աշխատակիցների համար անհնար էր մատուցել ծառայությունները 1 օրում:

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչը ՍՑ-ԱՄ-2017/97 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ հայտնել է, որ ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետը հեռախոսով տեղեկացրել է «Դառես» ՍՊԸ-ի ներկայացուցչին N 1 հանձնարարականի և նախատեսվող աշխատանքների մասին, սակայն Ընկերության ներկայացուցիչները չեն ներկայացել հանձնարարականը ստանալու, իսկ արդեն N 2 հանձնարարականը, որը նույնաբովանդակ էր N 1 հանձնարարականի հետ, 29.11.2017թ-ին ուղարկվել է Ընկերության էլեկտրոնային հասցեին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Դառես» ՍՊԸ-ի միջև 28.09.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, 2017թ. դեկտեմբերի 19-ին միակողմանի լուծել է ամբարների /ռեզերվուարների/ վերանորոգման և պահպանման ծառայությունների /50 և 75 խմ տարողությամբ հորիզոնական տարողությունների նորոգման ծառայություն/ գնման N ԳՀԾՁԲ-7/17-1 պայմանագիրը:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: ***Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով, Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Դառես» ՍՊԸ-ն) ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի հանձնարարականների*** 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.11.2017թ.-ը:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից չի ապացուցվել այն փաստը, որ Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը ստացել է Պատվիրատուի N 1 հանձնարարականը, որի հիման վրա Ընկերությունը պետք է մատուցեր ծառայություններ, մինչդեռ՝ Խորհուրդն ապացուցված

է համարում այն փաստը, որ Պատվիրատուն N 2 հանձնարարականը, որը նույնաբովանդակ էր N 1 հանձնարարականի հետ, 29.11.2017թ-ին Պայմանագրի ժամկետի ավարտից մեկ օր առաջ ուղարկել է Ընկերության էլեկտրոնային հասցեին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Պայմանագրին կից Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ չտալով N 1 հանձնարարականը, իսկ N 2 հանձնարարականը ուղարկելով Ընկերության էլեկտրոնային փոստին 29.11.2017թ-ին, այսինքն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ օր առաջ, փաստացի զրկել է «Դառես» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 28.12.2017թ. թիվ 03/26-3/24587-17 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02624964) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ